

<p style="text-align: center;"><b>ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ</b>  <b>ՏԱՂԱՎԱՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ</b>  <b>ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿՍՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ</b>  <b>ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ</b>  <b>N ԲՏԱՆ-ՄԱԱՇԶԲ-2025/04</b>  <p>ք. Երևան      «05» 05 2025թ.</p> </p>	<p style="text-align: center;"><b>STATE PROCUREMENT CONTRACT ON</b>  <b>PERFORMING WORKS</b>  <b>OF CONSTRUCTION OF A PAVILION FOR</b>  <b>STATE NEEDS</b>  <b>No BTAN-MAAShDzB-2025/04</b>  City of Yerevan      «05.05. 2025</p>
<p>ՀՀ քարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Դ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մայնդ Սփիրիթ Դիզայնս &amp; ՈՒՈՐՔՍ» ՍՊԸ-ն, ի դեմս Էշա Դեննիսի, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:</p>	<p>The Ministry of High-Tech Industry of the Republic of Armenia, represented by D. Gasparyan, Secretary-General, acting on the basis of the Statute of the Ministry (hereinafter referred to as "the Client"), on the one hand, and «Mind Spirit Designs &amp; Work LLC», represented by Esha Dennis (hereinafter referred to as "the Executor"), on the other hand, concluded this Contract on the following:</p>
<p style="text-align: center;"><b>1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ</b></p> <p>1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տաղավարի կառուցապատման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:</p> <p>1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:</p>	<p><b>1. SUBJECT MATTER OF THE CONTRACT</b></p> <p>1.1. The Client shall assign, and the Executor shall undertake the obligation of performing works of construction of a pavilion (hereinafter referred to as "the works"), pursuant to the requirements of Technical Specification-Procurement Schedule prescribed by Annex No 1 constituting an integral part of this Contract (hereinafter referred to as "Contract").</p> <p>1.2. The works shall be performed in compliance with the Technical Specification-Procurement Schedule prescribed by Annex No 1 to this Contract and within the time limits prescribed thereby.</p>
<p style="text-align: center;"><b>2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</b></p> <p>2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝</p>	<p><b>2. RIGHTS AND RESPONSIBILITIES OF THE PARTIES</b></p> <p>2.1. The Client shall have the right:</p>

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

## 2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1. To check, at any time, the progress and quality of the works performed by the Executor without intervening in the activities of the latter:

2.1.2. Where the works performed do not comply with the Technical Specification-Procurement Schedule indicated in Annex No 1 to the Contract:

(a) Not to accept the works and prescribe a reasonable time limit at his/her discretion for gratuitous substitution of the works of improper quality with works complying with the Contract, and request from the Executor to pay the fine provided for by point 5.2, as well as the penalty provided for by point 5.3 of the Contract;

(b) To refuse to perform the Contract and request to return the amount paid for the works, as well as request from the Executor to pay the fine provided for by point 5.2 of the Contract;

2.1.3. To unilaterally rescind the Contract where the Executor has made a substantial violation of the Contract. Violation of the Contract by the Executor shall be deemed to be substantial where:

(a) the works performed fail to comply with the requirements prescribed by Annex No 1 to the Contract;

(b) the time limit for performance of the works has not been complied with.

## 2.2. The Client shall be obliged:

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.2.1. To discuss and accept the results of the works performed in compliance with Technical Specification-Procurement Schedule, and in case of detecting shortcomings in the result of the works — immediately inform the Executor thereon in writing.

2.2.2. To pay the Executor — in case of accepting the results of the works — the amounts payable to the latter and in case of not complying with the time limits — also the penalty provided for by point 5.5 of the Contract.

**2.3. The Executor shall have the right:**

2.3.1. To request from the Client to pay the amounts payable thereto, and in case of not complying with the time limit indicated in point 4.2 of the Contract by the Client — also the penalty provided for by point 5.5 of the Contract.

**2.4. The Executor shall be obliged:**

2.4.1. To ensure the performance of the works under the conditions prescribed by Annex No 1 to the Contract, governed by the existing legislation.

2.4.2. To pay the penalty and fine provided for in points 5.2 and 5.3 of the Contract in cases prescribed by the Contract.

**3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԿԱՐԳԸ**

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին

**3. PROCEDURE FOR DELIVERY AND ACCEPTANCE OF THE WORKS**

3.1. The performed works shall be accepted by signing a Delivery and Acceptance Protocol between the Client and the Executor. The

հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ

delivery of the works to the Client shall be recorded through a document mutually approved by the Client and the Executor, indicating the date of drawing up the document.

Before the day provided for by the Contract for performance of the works included, the Executor shall provide the Client with the document recording the fact of delivery of the works signed thereby (Annex N 3.1) and 2 copies of the Delivery and Acceptance Protocol (Annex N 3).

3.2. The Delivery and Acceptance Protocol shall be signed where the works performed complies with the terms of the Contract. Otherwise, the results of performance of the Contract or a part thereof shall not be accepted, the Delivery and Acceptance Protocol shall not be signed and the Client shall:

- (a) undertake measures provided for by the Contract for such situation to regulate the issue;
- (b) apply liability measures provided for by the Contract against the Executor.

3.3. The Client shall, within 5 working days counted from the working day following the day of receipt of the Delivery and Acceptance Protocol, submit to the Executor one copy of the Delivery and Acceptance Protocol signed thereby or the reasoned rejection for not accepting the works.

3.4. Where the Client does not accept the works performed or does not reject the acceptance thereof within the period

<p>աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:</p> <p>3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:</p>	<p>prescribed by point 3.3 of the Contract, the works performed shall be deemed to be accepted, and the Client shall provide to the Executor — on the working day following the deadline prescribed by point 3.3 of the Contract — the Delivery and Acceptance Protocol approved by the Client.</p>
<p><b>4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ</b></p> <p>4.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 72000 (յոթանասուներկու հազար) Եվրոյին համարժեք ՀՀ դրամ:</p> <p>Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, սուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:</p> <p>Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:</p> <p>4.1.1 Պայմանագրի գնից՝ 21600 մինչև (քսանմեկ հազար վեց հարյուր) Եվրոյին համարժեք ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև</p>	<p><b>4. CONTRACT PRICE</b></p> <p>4.1. The price of the works to be performed by the Executor under the Contract comprises 72000 (seventy-two thousand) EURO equal to AMD.</p> <p>The price includes all the expenses made by the Executor, including taxes, duties and other payments prescribed by the legislation of the Republic of Armenia.</p> <p>The price for performing the works is fixed and the Executor and Client are not entitled to require an increase and decreasing of that price, respectively.</p> <p>4.1.1. The Client shall transfer up to 21600 (twenty-one thousand six hundred) EURO equal to AMD of the Contract price to the bank account of the Executor as an advance payment. Redemption of the advance payment shall be carried out in the form of deductions (withholdings) from payments made on the basis of the Delivery and Acceptance Protocols. Moreover, no payment shall be made to the Executor until the full redemption of the</p>

կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված

advance payment.

4.2. The Client shall pay for the works performed in Armenian drams, in a non-cash form, by transferring the funds to the settlement account of the Executor. Transfer of monetary funds shall be made on the basis of the Delivery and Acceptance Protocol, in the amounts and months provided for by the payment schedule of the Contract (Annex No 2). Where the Protocol is drawn up after the 20<sup>th</sup> day of the given month and financial means are envisaged during that month by the payment schedule, the payment shall be made within 30 working days but not later than before 30<sup>th</sup> of December of the given year.

Moreover, in order to process a payment, within 3 working days after the date of signing the handover-acceptance protocol, the customer enters the payment instruction and a copy of the handover-acceptance protocol into the treasury system of the authorized body, and on the basis of the documents submitted in accordance with the established order, the authorized body makes the given payment if the handover-acceptance protocol is entered into the treasury system within the time limits set by the payment schedule of this contract, within five working days.

<p>ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:</p>	
<p><b>5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՆՍՎՈՒԹՅՈՒՆԸ</b></p> <p>5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:</p> <p>5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է սուղանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում սուղանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:</p> <p>5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է սույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:</p> <p>5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված սուղանքը և սույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:</p> <p>5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված</p>	<p><b>5. LIABILITY OF PARTIES</b></p> <p>5.1. The Executor shall be responsible for compliance with the requirements of this Contract for performance of the works.</p> <p>5.2. In each case of performing works not complying with the technical description specified in Annex No 1 to this Contract, a fine shall be charged from the Executor in the amount of 0.5 (zero point five) per cent of the amount provided for by point 4.1 of the Contract. Moreover, the fine shall be calculated also in the case where the works are performed within the time limit prescribed by this Contract but they are not accepted by the Client.</p> <p>5.3. In case of violation of the time limits prescribed for the performance of works provided for by the Contract, a penalty in the amount of 0,05 (zero point five hundredth) per cent of the price of the unperformed work subject to performance shall be charged from the Executor for each delayed working day.</p> <p>5.4. The fine and the penalty provided for by points 5.2 and 5.3 of the Contract shall be calculated and offset along with the amounts subject to payment to the Executor for the results of the works performed.</p> <p>5.5. In case the Client violates the time limit provided for by point 4.2 of the Contract, a penalty in the amount of 0,05 (zero point five hundredth) per cent of the unpaid amount subject to payment shall be calculated against the Client for each delayed working day.</p>

աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

5.6. In cases not provided for by the Contract, the Parties shall be held liable as prescribed by the legislation of the Republic of Armenia for non-performance or improper performance of their obligations.

5.7. The payment of a penalty and/or fine shall not exempt the Parties from fulfilling their contractual obligations fully and properly in accordance with the requirements established by the contract.

**6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶՂԵՑՈՒԹՅՈՒՆ (\$ՈՐՄ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն

**6. FORCE MAJEURE**

In case of failure to fully or partially fulfil the obligations assumed under this Contract and the Agreements concluded based on this Contract, the Parties shall be exempt from liability, where it occurred due to a force majeure which arose following the conclusion of this Contract and which the Parties could not have foreseen or prevented. Such situations shall be earthquake, flood, fire, war, declaring martial law and state of emergency, political disturbances, strikes, termination of the operation of communication means, the acts of the state bodies etc., that make impossible the fulfilment of the obligations assumed under this Contract. Where the effect of the force majeure lasts for more than 3 (three) months, each of the Parties shall have the right to rescind the Contract by informing the other Party thereon in advance.

պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր

**7. MISCELLANEOUS**

7.1. This Contract shall enter into force from the moment of it being signed by the Parties and shall be in effect until the full performance by the Parties of the obligations assumed under this Contract.

The registration of the Contract by the Ministry of Finance of the Republic of Armenia shall act as a condition for the fulfilment of the rights and responsibilities of the Parties provided for by the Contract.

7.2. A Party's payment obligation having arisen from the Contract may not terminate with the offset of a counter-obligation having arisen from another contract without the written consent of the Parties confirmed with a seal. The right of a claim having arisen from the Contract may not be transferred to another person without the written consent of the debtor party.

7.3. Where, as a result of control or supervision over compliance with the requirements of the Law or as a result of examination of the complaints as prescribed by law, it is recorded that in the procurement process, prior to the conclusion of the Contract, the Executor had submitted false documents

(տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների

(information and data) or the decision on declaring him or her a selected bidder does not comply with the legislation of the Republic of Armenia, the Client shall — upon the emergence of these grounds — unilaterally rescind the Contract where the detected deficiencies having emerged prior to the conclusion of the Contract would have constituted a ground for not concluding the Contract pursuant to the legislation of the Republic of Armenia on procurement. Moreover, the Client shall not bear the risk of losses or lost profit incurred by the Executor as a result of unilateral rescission of the Contract, and the latter shall be obliged to compensate for the losses suffered by the Client by his or her fault as prescribed by the law of the Republic of Armenia and to the extent to which the Contract has been rescinded.

7.4. Disputes pertaining to the Contract shall be subject to examination in the courts of the Republic of Armenia.

7.5. Amendments and supplements may be made to the Contract only upon mutual consent of the Parties by way of conclusion of an agreement that will become the integral part of the Contract.

It shall be prohibited to make modifications to the Contract and — where the contract price is factor-based — also to any subsequent agreement attached to the Contract, which result in the artificial change of the volumes of the work to be procured or the unit price of the works to be acquired or the contract price.

Each modification to the Contract under the

կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի գրավոր առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել, քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն

influence of factors beyond the will of the Parties to the Contract shall be defined by the Government of the Republic of Armenia.

7.6. The period for completing the work may be extended up to the expiry of that time limit if there is a written proposal from the Contractor, provided that the demand at the Client for use of the works still exists, and the written proposal of the Executor has been submitted not later than at least 7 calendar days before expiry of the time limit initially prescribed by the Contract for performance of the works. Moreover, in the case prescribed by this point, the time limit for performance of the works may be extended once for up to 30 calendar days, but for not longer than the period prescribed by the Contract.

7.7. In case of proper performance of the Contract, the benefits (savings) gained or damages incurred by the Parties (Executor or Client) shall be deemed to be the benefit or damage of the given Party.

The obligations of the Parties to the Contract with respect to third parties, including other transactions concluded by the Executor within the scope of performance of the Contract and the obligations resulting therefrom shall be beyond the scope of the Contract and may not impact the acceptance of the results of the Contract. The relations pertaining to such transactions and the obligations arising therefrom shall be regulated by the rules governing the relations pertaining to those transactions, and the Executor shall be

կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

liable for them.

7.8. The Contract may not be modified as a result of failure by the Parties to partially perform their obligations or may not be fully rescinded upon the mutual consent of the parties, except for cases of reduction of financial allocations required for provision of services as prescribed by the legislation of the Republic of Armenia. Moreover, mutual consent of the parties on failure by the parties to the Contract to partially perform the obligations or on full rescission needs to be obtained prior to reduction of the financial allocations required for performance of the works as prescribed by the legislation of the Republic of Armenia.

7.9. The notification on full or partial unilateral rescission of the Contract on the ground of non-performance or improper performance of the obligations assumed by the Executor shall be published by the Client at the “Notifications on unilateral rescission of contracts” section of the website at the following address: [www.procurement.am](http://www.procurement.am), with the indication of the date of publication. The Executor shall be considered to be properly notified of the unilateral rescission of the Contract from the day following the publication of the notification under the procedure specified in this point. On the day the notification on full or partial unilateral rescission of the Contract is published in the bulletin, the Client shall also send it to the

Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է \_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

electronic mail of the Executor.

7.10. Any dispute arising from the Contract shall be settled through negotiation. In case of failure to reach an agreement, the disputes shall be settled in the courts of the Republic of Armenia.



7.11. The Contract is composed of \_\_\_ pages; it is concluded in two originals of equal legal effect. Annexes No 1, No 2, No 3 and No 3.1 to this Contract shall be the integral part of the Contract; each Party shall be provided with one copy of the Contract.

7.12. The applicable law for this Contract shall be that of the Republic of Armenia.

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՅԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ  
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


Պ Ա Տ Վ Ի Բ Ա Տ ՈՒ

ՀՀ բարձր տեխնոլոգիական  
արդյունաբերության նախարարություն  
Երևան Վ.Սարգսյան 3/3  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
Հ/Հ 900011031946  
ՀՎՀՀ 02565518  
Գլխավոր քարտուղար

  
\_\_\_\_\_  
(ստորագրություն)  
Կ.Տ  


Կ Ա Տ Ա Ր Ո Ղ


«Մայնդ Սփիրիթ Դիզայնս & Ուորքս»  
ՍՊԸ  
1811, Պրիզմ Թաուեր, Բիզնես Բեյ  
Դուբայ, Արաբական Միացյալ  
Էմիրություններ  
TIN: 100599193800003  
IBAN: AE550030011796274820001  
Էշա Դեննիս

\_\_\_\_\_  
(ստորագրություն/  
Կ.Տ  


8. ADDRESSES, BANK DETAILS AND SIGNATURES OF THE PARTIES

CLIENT

Ministry of High-Tech Industry  
of the Republic of Armenia  
3/3 V. Sargsyan, Yerevan  
Operations Department of the Ministry of  
Finance of the Republic of Armenia  
